# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրում տեղի ունեցած հանրային լսում ,Արամեե ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ

24.02.2024թ Իշխանասար բնակավայր

ՕՐԱԿԱՐԳ: Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսում:

Հանրային լսմանը մասնակցում էին ,Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնե ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Սյունիքի մարզի Սիսիան խոշորացված համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վարդան Խաչատրյանը, Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրի ներկայացուցիչ՝ Վարյա Անդրեասյանը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ՝ Դավիթ Եսայանը, Նախաձեռնող՝ Դավիթ Մարությանը և բնակիչներ:

,Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասինե օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2025թ. փետրվարի 24-ին ժամը 15:30-ին Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրում կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց ,Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնե ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, մեղմող միջոցառումները:

Խոսքը փոխանցվեց նախաձեռնող կողմի ներկայացուցիչ ,Արամեե ՍՊԸ-ի մասնագետ Մարատ Սաֆարյանին, ով ներկայացրեց դպրոցի ինժեներական լուծումների վերաբերյալ տեղեկատվություն:

Հնչեց հարց, Գոհար Մինասյանի կողմից ջեռուցման վերաբերյալ, քանի որ հաշվետվությունում նշված է կաթսայատնից, իսկ մեկ այլ տեղ նշված է էլեկտրական, ինչին ընկերության ներկայացուիչը պարզաբանեց, որ այո սնուցումը իրականացվելու է տեղադրված արևային պանելներից և այո լինելու է էլեկտրական:

Հնչեց հարց ոռոգման ջրի բերման աղբյուրի վերաբերյալ, ինչին նախաձեռնողը պատասխանեց, որ խմելու ջուրը բերվելու է Վեոլիա ջուր ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ համայնքի մասնակիցները որոշեցին հավանություն տալ ,Արամեե ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրում կրթահամալիրի կառուցման աշխատանքներին:

,Շրջակա միջավայրի վրա ազդեցության

փորձաքննական կենտրոնե ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան

«ԱՐԱՄԵ» ՍՊԸ
Տնօրեն՝ Ա. Սարգսյան

(ստորագրություն, կնիք)